# ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԲԱԶՄԱՎԻՊԻ 1897 ՄԱՐՏԻ ԹԵՐԹԻՆ


# ԼԵՒՈՆ Ե

## ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԹԱԳԱՒՈՐՆ

—

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ԿԱՐՈԼՈՍ Զ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԳԱՂՂԻՈՅ

### ԳԻՐՔ Զ

### ԳԼՈՒԽ Ա

*Ա. Խորհրդակցութիւն յատենի թագաւորին՝ Անգղիացւոց հետ ընելիք պատերազմին նկատմամբ.*

*Բ. Զանազան կարծիք.*

*Գ. Կարծիք Հայոց թագաւորին.*

*Դ. Թագաւորը կ'ուղարկէ զինքը յԱնգղիա:*

ԶԻՆԱԴԱԴԱՐՆ լրացած լինելով Անգղիոյ հետ, և զի գարունն ևս բերած էր նոր եղանակ մի հաճոյագոյն քան զձմեռն՝ որ շատ անձրևոտ էր եղած, պատերազմական պաշտօնէից մեծագոյն մասը արքունիք եկան՝ համար տալու իրենց գնդաց վիճակին և նոր ժողուած զօրաց մասին, և մեծ ժողով մի գումարուեցաւ խորհրդակցելու համար պատերազմին վրայ: Ներկայ էին թագաւորը, և Տուրենի դուքսը՝ իւր եղբայրը, Բերրիի, Բուրգոնեի և Բուրբոնի դքսերը՝ իւր հօրեղբարքը, և ոչ միայն միւս ամէն արեանառու իշխանք, այլ նա և Հայոց թագաւորը, և ուրիշ բազմաթիւ մեծամեծներ՝ որ իրենց տոհմին և պատույն պատճառաւ իրաւունք ունէին մըտնելու այն ժողովոյն մէջ:

Ամէն իշխանաց կարծիքն էր՝ որ այլ ևս չի խօսուի ոչ խաղաղութեան և ոչ զինադադարի վրայ, չընդունուի այլ ևս ոչ մի առաջարկութիւն Անգղիացւոց կողմանէ, վրէժ խընդրուի այն ամէն դրժանաց՝ զոր ըրեր էին նոքա, և այն պատեհ առթով զէն ի ձեռին անոնց հատուցումն ըլլուի: Բայց որովհետև հակառակ կարծիք ունեցողները քիչ էին, աղաչեցին Հայոց թագաւորին՝ որ ինքն առաջարկէ իրենց պատճառաբանութիւնքը, որպէս զի լաւ ևս ունկնդրութիւն գտնէին: Նա մեծահոգի և շատ խոհեմ թագաւոր մ'էր, և թէպէտ և մինչև այն ատեն հրաժարեր էր իւր կարծիքները յայտնելու արքայական ժողովոյն մէջ, կամ մեր լեզուին այնչափ հըմուտ չըլլալուն, և կամ զի չէր համարձակեր մասնակցելու այնպիսի մեծաշուք Ատենի մը, վերջապէս բացաւ բերանը՝ և քիչ խօսքերով՝ մեծամեծ բաներ ըսաւ.

« Թէպէտ և ես ձեր կարծիքէն չեմ, մեծապայծառ դքսեր և իշխաններ, բայց այսու չեմ կրնար չի գովել անոր վեհանձնութիւնը, և թագաւորն ինձ պիտի ներէ, եթէ կը համարձակիմ ըսելու իրեն՝ թէ այդ խորհուրդը զոր իրեն կու տաք, իրեն համար շահաւէտ, և ձեզ՝ փառաւոր նշանակ մ'է այն ազնիւ բարկութեան, որ զձեզ կը վառէ՝ առ ձեզ եղած անիրաւութեանց վրէժը խնդրելու: Իրաւացի է, չունիմ ըսելիք մի. բայց այս միայն կը փափաքիմ, Տեարք, որ ադոնք նըւազ արագութեամբ գործուին, որպէս զի կըրկին օգտաւէտ ըլլան, նախ քան զպատերազմ՝ անոնց ըրած անիրաւութիւնը ցուցընելով:

***

digitised by A.R.A.R.@

Եթէ ճշմարիտ է՝ որ այնչափ անգամ դրժեր են դաշանց ուխտին, որուն վրայ բնաւ չեմ տարակուսիր, փափաքելի էր ինձ մեղմով ազդել իրենց այդ բանը, և այս բանագնացութիւնս՝ մեծ ծանրութիւն մի կու տայ մեր զինուց արդարութեան։ Կը տեղեկանամ ձեր պատմութիւններէն, թէ ձեր բոլոր Թագաւոր նախնիք՝ միշտ պահած են այս գովելի սովորութիւնը, և որպէս զի փարատեմ ամէն կասկած խօսքերուս անկեղծութեանը վրայ, ես այդ պաշտօնը ամենայն յօժարութեամբ յանձն կ'առնում. և թէպէտ չունիմ Անգղիացւոց հետ ո՛չ ընտանութիւն և ոչ բարեկամութիւն, թերևս աւելի կարող պիտի ըլլամ հաւանեցընել զանոնք՝ քան թէ ձեր ազգէն ուրիշ ո և իցէ մէկը, այն անողոքելի ատելութեանն համար՝ զոր ունին նոքա ընդդէմ Գաղղիոյ »։

Ընդունելի եղաւ այս առաջարկութիւնս, և Թագաւորը շնորհակալ եղաւ իրեն, և քանի մը արքունի անձերով ճամբու դրին զինքը՝ որ յաջողակ հողմով անցաւ ծովէն։ Անգղիոյ Թագաւորը շատ փառաւորուեցաւ այս դեսպանութեամբ, որուն օրինակ մը չի կար երբեք իւր նախնեաց Թագաւորութեան ժամանակ, և իւր կողմանէ ամէն բան ըրաւ զայն աւելի շքեղ ընելու. և Հայոց Թագաւորին արժանաւորութիւնն և համբաւը ստիպեցին զինքը սիրով և յօժարութեամբ ընելու այն ամէն բանը՝ զոր պիտի ընէր միայն ըստ պահանջանաց իւր մեծութեան։ Ղրկեց շատ մը ազնուականներ ընդունելու զինքը, և երբ լսեց թէ մօտեցեր է, ընդ առաջ գնաց ձիու վրայ նստած՝ արքունեաց իշխանական անձանց գեղեցիկ խմբով մը, և ջերմ գրկախառնութեամբք, գգուանօք և քաղցրութեամբ ցըցուց իւր սրտին անհամեմատ ուրախութիւնը։ Բընակեցուց զինքը արքայական շքով Լոնդրայի մէջ, և բազմաթիւ խնճոյիւք պատուեց զնա, և գնաց նոյն իսկ ճաշելու իրեն հետ, և խօսեցան ի միասին հանդարտութեամբ դաշանց խաղաղութեան և իր յԱնգղիա ճամբորդութեան պատճառաց վրայ։

## ԳԼՈՒԽ Բ

Ա. Գեղեցիկ ատենաբանութիւն Հայոց թագաւորին առ թագաւորն Անգղիոյ՝ իւր ժողովոյն մէջ.

Բ. Պատասխան Անգղիոյ թագաւորին.

Գ. Դարձ Հայոց թագաւորին առանց բան մ'որոշելու.

Դ. Տեսակցութիւն մը կ'առաջարկուի ի մէջ Գաղղիոյ և Անգղիոյ թագաւորաց.

Ե. Յետոյ պատգամաւորութեան կը փոխուի այն.

Զ. Թէ Անգղիացիք նենգութեամբ կը վարուին։

Հ ԱՅՈՑ Թագաւորն ինը օր միայն կեցաւ այն արքունեաց մէջ, և իւր դեսպանութիւնն այն յաջողութիւնը միայն ունեցաւ, որ Անգղիացիք դժկամակութիւն չի ցըցուցին՝ իրեն տրուած հասարակաց ժողովոյն մէջ չափազանց ի նպաստ Գաղղիոյ խօսելուն համար, որ հետևեալ գեղեցիկ խօսքերը արտասանեց համոզելու համար իրենց Թագաւորը՝ բարեկամութեամբ ապրելու մեր ինքնակալին հետ։ « Ոչ եթէ չողոքորթութիւնն՝ այլ մանաւանդ թէ եղբայրական և ճշմարիտ սէրն է որ կը հարկադրէ զիս ըսելու ձեզ, թէ արևելեան ժողովուրդք՝ մինչև հիմա՝ հիացած են ձեր զօրութեան և մեծութեան վրայ. և զիրենք ուրիշ բան չարգելուր՝ զձեզ դրուատեօք պանծացընելէ, բայց եթէ այն անհաշտ ատելութիւնն՝ զոր ունին երկու մեծագոյն Թագաւորութիւնք աշխարհի։ Աւա՜ղ, իմ թշուառութիւնս խիստ անսովոր է, և բախտն անդադար կը թշնամանէ զիս, և կը ստիպէ զիս յանդիմանել զձեզ՝ թէ այս անգութ պառակտումն է որ պատճառ եղաւ իմ կործանմանս՝ անհաւատից և Յիսուսի թըշնամեաց անարգել յաղթական եղող զէնքերէն, և թէ նոյն ինքն կը ձգէ զիս այս ողբալի վիճակիս մէջ, ըսելու՝ թէ Թագաւորեցի ես ալ, և ահաւասիկ այն մեծ Թագաւորս՝ խեղճ աքսորական մը դարձած՝ կ'ապրիմ հեծելու համար բախտին անուոց ճնշման տակ. այն բախտին՝ որ պսակը՝ զարդ մը կը համարի իմ յուզարկաւորութեան հանդիսիս, և Թագըն՝ իբրև պատանք մը ի մահ դատապարտեալ յանցաւորաց։ Ո՛վ հզօր իշխանք, եթէ հաստուցած ըլլայիք Աստուծոյ այն ծառայու-

digitised by A.R.A.R.@

թիւնը՝ զոր իրեն կը պարտին ձեր զէնքերը, և առ որ շատ անգամ յորդորուեցաք, արևելքի տառապեալ քրիստոնեայք՝ — զոր Նա գնեց իւր արեամբ՝ — այնչափ չէին հառաչեր սրոյ և մուրողութեան ճնշման տակ, այն աշխարհաց քաղաքները՝ որ երբեմն այնչափ ջերմեռանդ էին քրիստոսական հաւատոց, և գլխաւորապէս Բեթղեհէմ՝ փոքրիկ Յիսուսին ծննդավայրը, և աստուածային Սիոն՝ զոր Նա այնչափ պայծառացուց և նշանաւոր ըրաւ իւր հրաշքներով, չէին հեծեր այսօր Թրքաց, Արաբաց և Պարսից անտանելի լծոյն ներքև։ Բայց դուք կ'արհամարհէք այս փառաւոր և փրկաւէտ առիթները՝ աշխարհակալութիւններ ընելու և պատերազմելու բարբարոսաց դէմ, որպէս զի մխէք ձեր զէնքերը քրիստոնէութեան ծոցը։ Վաթսուն տարի է որ չարունակ կը գողնան, կը կողոպտեն, հիմնայատակ կ'ընեն, կ'այրեն և քաղաքներ կը կործանեն երկու կողմանէ ալ. աւարի կ'առնուն դաշտական երկիրներ, անմեղ գիւղացին կը կեղեքուի Թագաւորաց կռիւներուն համար, և անվերջ պատերազմաց կը մատնուի։ Ես այս ամէն բանէն ի՞նչ իրական արդիւնք յառաջ եկաւ, բայց եթէ ահաւոր արիւնհեղութիւն։ Ես կ'աղաչեմ ձեզ, ըսէք ինձ, երկու կողմէն ո՞րն աւելի շահաւոր եղաւ։ Եթէ տրուէին այդ կարծեցեալ շահերը այնպիսի անձանց՝ որք կարենան ճշդութեամբ համեմատել շահը վնասուց հետ, ոչ ոք ձեզմէ պիտի ուրախանայ իւր յաղթութեանց վրայ, այլ պիտի ստիպուի խոստովանիլ թէ անոնք իրեն շատ սուղի նստած են. դուք իսկ պիտի խոստովանիք, թէ զանոնք շահած էք ի ձեր թշուառութիւն, թէ այն ամէն պտուղք քիչ մը ժամանակ տևեր են, և այնչափ առած տեղերէն հազիւ ձեզի մէկ հատ միայն կը մնայ՝ ի փոխարէն այնչափ նեղութեանց և թափուած արեան։ Գաղղիացիք թերևս պիտի կարենան պարծիլ ուրիշ զարմանալեաց. բայց խօսքս համառօտելու և ձեր շահերուն հակառակ վիճաբանութեանց մէջ չի մտնելու համար, վասն զի աւելի օգտակար է ըսել զճշմարիտն քան շողոմել Թագաւորաց կիրքերը՝ որ շատ իսկ ներողամիտ են, կը համարձակիմ ըսելու ձեզ, Պերճափա՛յլ իշխանդ, թէ փառասիրութիւնն է որ զձեզ կը դրդէ ի պատերազմ՝ տիրելու համար Գաղղիոյ։ Բայց եթէ հին Թագաւորք ամէն ժամանակ հաստատեր են անոր ժառանգութիւնը իրենց ցեղին մէջ, և եթէ ինքնակալաց զօրութիւնը մանաւորապէս իրենց հըպատակաց սիրոյն և հնազանդութեան մէջ կը կայանայ, կարծեմ թէ այն Թագը անխախտելի է բոլոր ձեր յարձակմանց դէմ, և ձեզ լաւ խորհուրդ մը կու տամ դադրեցընելու արեան հեղեղը, և գոհանալու ձեր օրինաւոր իշխանութեամբ։ Ուստի ձեր բոլոր այդ պահանջներն ստուգիւ սերմանք են եղեռնաւոր ատելութեան մը, և հազար պատերազմունք անօգուտք ապագային, կամ աւելի ճիշդն ըսել՝ արգելք են ծրագրի մը՝ որ կրնար ձեզ փառամատոյց և օգտաւէտ ըլլալ, եթէ դարձընէիք զէնքերնիդ՝ երկու կողմանէ ալ՝ յահորկութիւն թշնամեաց խաչին։ Դուք պիտի յաղթէիք անշուշտ այս մեր փրկութեան սուրբ նշանին տակ, և պիտի խորտակէիք յայնկոյս ծովուն մնացած թշուառ քրիստոնէից լուծը և շղթաները, որ ձեզի ձեռք կը կարկառեն, և կը յուսան իրենց ազատութիւնը ձեր միաբան օգնութենէն՝ որուն կը սպասեն օրէ օր»։

Թագաւորին մտադիր ուշադրութիւնը յայտնի ցըցուց թէ այս ճառը իրեն անհաճոյ չէր, բայց աւելցուց. «Ես սիրով կ'ընդունիմ խաղաղութեան դաշինքը, եթէ զայն բերէք ինձ այն պայմաններով՝ զորս դրաւ հանգուցեալ Թագաւորն՝ իմ բարձրապատիւ տէրս և հայրս։ Գաղղիոյ Թագաւորութիւնը իրեն կը պատկանէր մօրը իրաւամբ, և Նա յանձն առաւ թողուլ իւր պահանջը՝ միայն թէ տրուէին իրեն Գույանի և Նորմանդիոյ դքսութիւնները։ Ես ալ հօրս գաղափարին վըրայ եմ, որ եթէ կատարուի, պատրաստ եմ կնքելու խաղաղութեան դաշինքը, և հաստատելու Գաղղիոյ Թագին հետ անվերջ դաշնակցութիւն մը»։

Ժողովը լուծուեցաւ առանց եզրակացութեան մը յանգելու, և Հայոց Թագաւորն անցաւ ծովէն ամբառ թանկագին ընծաներով՝ թէ՛ գոհարեղէն և թէ կերպասեղէն, և ձիերով՝ Անգղիոյ Թագաւորին կողմանէ, որ գաղտուկ աղաչեց իրեն՝ որ միջոց մը գտնէ վերստին հաստատելու դաշինքը, և գործերը բանակցութեան մը վերածելու, որուն համար արդէն մասնաւոր դեսպաններ պատրաստեր էր ինքը, որք իշխանութիւն պիտի ունենային զանոնք միաբանելու, միայն թէ ընդունելութիւն գտնէին. յայտնեց նաև իրեն թէ մեծ փափաք ունէր տեսնելու մեր Թագաւորը, և բերան ի բերան խօսել իրեն հետ։

Թագաւորը լաւ գաղափար մը չունեցաւ այս տեսակցութեան առաջարկութեան վրայ, սակայն չուզեց կորսնցընել առիթ մ'անգամ՝ ցուցընելու թէ բնաւ անփոյթ չէր ոչ մէկ բանի՝ իւր տէրութեան հանգստեան համար, կարծելով թէ երկու կողմէն եղած բանակցութիւն մը՝ որուն մէջ պիտի վիճէին բերան ի բերան երկու կողման խնդրոց նկատմամբ, իշխանութիւն ևս ունենալով անմիջապէս վը-

digitised by A.R.A.R.@

ճռելու, կրնար գէթ իրերը պատրաստել իրաւախոհութեան մը ապագային համար։ Որուն համար անհամար բազմութեամբ աղնուականաց ճամբայ ելաւ Բուլոնիէն, առանց սակայն պատերազմական կերպարանք մը տալու. բայց տեսակցութեան ժամանակէտը լրանալու մօտ լինելով, լուր եկաւ յԱնգղիոյ՝ թէ մաքերնին փոխեր էին պատգամաւորութեան մը, թէ թագաւորը չէր կրնար գալ ի Կալէ, և թէ հոն իր կողմանէ մարդ պիտի ղրկէր։

Հարկ եղաւ դարձեալ հաւանելու, ցուցընելու համար թէ քրիստոնէութեան բարւոյն համար ո՛և է միջոց չէին արհամարհեր. ընտրեցին անոնց ղրկածներուն աստիճանով պաշտօնեայներ, և երկրորդ ժողով մի ըրին ի Լելինգէն՝ Կալէի և Բուլոնեի մէջ, որ ճիշդ առաջնոյն հետևանքը ունեցաւ, մանաւանդ թէ չարագոյն, ուր անկարելի եղաւ զգաստացընել Անգղիացիները՝ որ ուրիշ ամէն ժամանակէ աւելի յանդուգն և անհաւան գըտնուեցան, և նախատալից միանգամայն և անըրանաւոր առաջարկութիւններ ըրին։ Այսպէս չարամտութեամբ կը մերժէին մեր խորհրդոց կատարումը, և մենք ունէինք ստուար բանակ մը պատրաստ՝ որ ոչինչ չէր ըներ. մինչդեռ իրենց ծովու աւազակները ծովը կը բռնէին, մեր ծովափունքը կ'ընթանային, կը յափշտակէին ինչ որ գտնէին՝ մինչև ձկնորսներն անգամ, և կը տանէին Անգղիոյ նաւահանգիստները։ Նոյն իսկ Կալէի, Բրեստի և Քերբուրգի պահապան զօրքերն աւերակ կը դարձընէին դաշտերը, ամենուրեք յափշտակութիւններ ընելով և գերի տանելով, և կը դառնային այնչափ լի աւարաւ՝ որչափ պատերազմի մէջ անգամ չէին կարող գտնել։

*Նկարագիր հանդիսին որ կատարուեցաւ Ս. Դիոնիսիոս եկեղեցւոյն մէջ՝ ի պատիւ Սիկիլիոյ թագաւորին հեծելազօրուն։*

(Յամի Տեառն 1389)

Յետ աղօթից՝ որ կը կատարուէր Մարտիրոսաց սեղանոյն առջև, թագաւորը տարաւ զանոնք նոյն կարգաւ թագաւորական դահլիճը, ուր ընթրիքը պատրաստուած էր. և իրմէ ետքը բազմեցան իւր աջակողմը Սիկիլիոյ թագուհին, Բուրգոնեի և Տուրենի դքսերը և Հայոց թագաւորը։

(Յամի Տեառն 1391)

Անմիջապէս ետքը թագաւորը կու գար, ապա Հայոց թագաւորը, թագաւորին հօրեղբայրքը, միւս ազգակից իշխանք, ամենքը երկու երկու, և 22 առաջնորդք անթիւ բազմութեամբ ժողովրդեան։

## ԳԼՈՒԽ Զ

(Յամի Տեառն 1393)

*Մահ Լևոնի Հայոց թագաւորի և իւր շքեղ յուղարկաւորութիւնք ի Կելեստինեանց վանքն ի Պարիս։*

Յիսնեկաց առաջին կիւրակէին մեռաւ իր տան մէջ ի Պարիս Լևոն թագաւորն փոքուն Հայոց, որուն իւր երկրէն հալածուած ըլլալը պատմեցինք վերագոյն և ի թագաւորէն ընդունուիլը, որ տարը տարիներէ ի վեր կ'օգնէր իրեն իւր տէրութիւնը կանգուն պահելու համար, և զոր՝ իւր սովորական մեծանձնութեամբ լի ըրած էր ամենայն բարեօք։ Գեղեցիկ կերպով գործածեց նա այն պատեհը՝ զոր տուաւ իրեն իւր հիւանդութիւնը, հոգալու իւր հոգւոյն փրկութիւնը. խօսեցաւ մեր կրօնից իրաց նկատմամբ իւր հետ ունեցած եկեղեցականաց հետ, և հաւատոց երկայն խոստովանութենէ մը ետքը՝ զոր բառ առ բառ արտասանեց, և որ զինքը արժանի ըրաւ խորհրդոց Եկեղեցւոյ, զորս ընդունեցաւ զղջացեալ և խոնարհ սրտիւ, կարգաւորեց իր մեծ հարստութիւնները՝ զորս դիզած էր թագաւորին առատաբաշխ նուիրօք։ Զանոնք չորս մասի բաժնեց, առաջինը տուաւ աղքատաց և մուրացիկ կրօնաւորաց, երկրորդը՝ օտարածին որդւոյն, երրորդը՝ իր բոլոր սպասաւորաց, և վերջինը՝ իջևանին տերանց։

Գալով իր մեծաշուք յուղարկաւորութեան՝ որ կատարուեցաւ Կելեստինեանց եկեղեցին, պատուիրեց որ թաղեն զինքը ըստ թաղման Հայոց թագաւորաց, որուն համար շատերը զարմացան ի Պարիս տեսնելով իւր ազգակիցքը ճերմակ հագուած դագաղին ետևէն՝ ուր կը հանգչէր իրենց թագաւորը ճերմակ անկողնոյ մը մէջ՝ հագած իւր թագաւորական ճերմակ զգեստները, գլխուն քով ալ ոսկի թագ մը։ Ջրագները բռնողք ալ ճերմակազգեստ էին, և ամենայն թագաւորական պատուով և շքով կատարուեցաւ յուղարկաւորութեան հանդիսին միւս մասը։

digitised by A.R.A.R.@